

# Սյունյաց երկիր

ՆԱԲԱԹ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017Թ.  
№ 35 (453)  
www.syuniacyerkir.am

**... Մի անգամ քեզ  
ծառ զգա  
Կացինդ արելուց  
առաջ:**  
Նամո Սահյան



## «Սյունիքի մարզի տարվա մարդ» (հայտարարվում է ընթերցողների քվեարկություն)

«Սյունյաց երկիր» թերթն առաջին անգամ փորձում է որոշարկել, թե մարզի բնակիչների կարծիքով եւ 2017թ. արդյունքներով ով կճանաչվի «Սյունիքի մարզի տարվա մարդ»:

Այդ նպատակով 2017թ. նոյեմբերի 1-ից 30-ը թերթն ընթերցողների շրջանում անց է կացնում քվեարկություն:

Եթե ընթերցողը ցանկանում է մասնակցել քվեարկությանը, ապա պետք է հետեւյալ բովանդակությամբ գրություն ուղարկի թերթի խմբագրություն՝ «Առաջարկում եմ 2017թ. արդյունքներով «Սյունիքի մարզի տարվա մարդ» ճանաչել ..... -ին»:

Գրությունը կարելի է ուղարկել փոստով՝ թղթային տարբերակով (ք. Կապան, Շահումյան 20/32) կամ խմբագրության էլեկտրոնային հասցեով՝ syuniacyerkir@mail.ru (առաջարկությունը կարող եք գրառել նաեւ մեր ֆեյսբուքյան էջում):

Խմբագրությունում ստեղծված հանձնախումբը կհավաքի քվեաթերթիկները (գրառումները) եւ դրանց հիման վրա մինչեւ դեկտեմբերի 15-ը կամփոփի ու կարծանագրի, թե ում են նախապատվություն տվել ընթերցողները: Առավել շատ ծայր հավաքած անձնավորությունն էլ (մեկ մարդ) կճանաչվի «Սյունիքի մարզի տարվա մարդ»:

Հաղթող ճանաչվածին կտրվի համապատասխան վկայական: Այդ մասին հատուկ հաղորդագրություն կտարածվի «Սյունյաց երկիր» թերթում եւ syuniacyerkir.am կայքում:

Քվեաթերթիկները կարող են լինել անանուն՝ գաղտնիությունն ապահովվելու համար:

Անշուշտ, ընթերցողն ինքն է որոշում, թե ում է ուզում ճանաչել «Սյունիքի մարզի տարվա մարդ»: Ընթերցողն ինքն է որոշում նաեւ զնախատման չափանիշները, իսկ չափանիշ կարող է լինել նաեւ նախորդ տարիների գործունեությունը:

Պարզապես ցանկալի է, որ առաջարկվող թեկնածուները հնարավորինս հայտնի լինեն իրենց մարդկային, քաղաքացիական, բարոյական եւ գործարար հատկանիշներով, հասարակական ակտիվ կենսադիրքով ու այլ արժանիքներով, ինչը նկատելի է եղել ոչ միայն 2017-ին:

Ցանկալի է, որ «Սյունիքի մարզի տարվա մարդ» ճանաչվեն տեղական կամ մարզային մասշտաբի գործիչները, սակայն հավասարապես կարող են եւ առաջարկություններ արվել համահայաստանյան գործիչների վերաբերյալ: Եվ դա, կրկնում ենք, պետք է որոշի ինքը՝ ընթերցողը:

Եվ այսպես՝ նոյեմբերի 1-ին մեկնարկում է ընթերցողների քվեարկությունը «Սյունիքի մարզի տարվա մարդ» անվանակարգի համար:

Միրով սպասում ենք ձեր քվեարկությանը եւ հավատում, որ սույն նախաձեռնությունը մեզանում կնպաստի մարդկային, բարոյական արժեքների, քաղաքացիական ակտիվ կենսադիրքի խթանմանը:

«Սյունյաց երկիր»

## Սյունիքը՝ կրթության եւ մշակույթի օջախ Գիտաժողով Գորիսի պետական համալսարանում

Հոկտեմբերի 19-20-ին Գորիսի պետական համալսարանում տեղի ունեցավ գիտաժողով «Սյունիքը կրթության եւ մշակույթի օջախ» թեմայով:

Գիտաժողովի առիթը Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակն էր:

Այդ կապակցությամբ Գորիս էին ժամանել չորս տասնյակից ավելի հյուրեր, որոնց թվում՝ համբավված գիտնականներ, այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեխան Դուրյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատ-

մական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Խառատյանը, գիտությունների դոկտորներ Դավիթ Գասպարյանը, Գեորգ Ստեփանյանը, Սարգիս Մխիթարյանը, Թամարա Հայրապետյանը, Վազգեն Համբարձումյանը, Հովիկ Մուսայեյանը, Վանո Եղիազարյանը, Հայկանուշ Մեսրոպյանը, Լաուրա Ասատրյանը, Շողիկ Ոսկանյանը:

Գիտաժողովին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինս-

տիտուտի, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի, Խ.Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի, Երեւանի պետական համալսարանի, Արցախի պետական համալսարանի, Վանաձորի պետական համալսարանի, Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի, Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի, «Սյունյաց երկիր» թերթի, Արցախի Հանրապետության պետական արխիվի,

էջ 5

## Ութ տասնամյակով իմաստավորված կյանք

Կապանի լեռնահարստացման կոմբինատի նախկին տնօրեն Ալբերտ Ստեփանյանը դարձավ 80 տարեկան: Թերթելով նրա կյանքի ութ տասնամյակով չափվող պատմությունը, հանդիպում ես հետաքրքրական դրվագների եւ ուսանելի էջերի: Արտադրության հմուտ կազմակերպիչը զբաղվել է նաեւ դասախոսական աշխատանքով, ունեցել ուշագրավ նախասիրություններ:

Լեռնագործի ընտանիքում է աչք բացել: Հայրը՝ Հմայակը, հորատող էր Լեւինյան հանքերում: Մանկությունն ու պատանեկությունը համընկել են պատերազմյան եւ հետպատերազմյան դժվարություններով լեցուն ժամանակաշրջանի հետ: Չորսը դեռ չլրացած՝ հայրը մեկնեց պատերազմ: Մարտերից մեկի ժամանակ զոհվել է: Նույնիսկ նրա մտապատկերում հոր կերպարը բացակայում է: Հորերթայր Գուրգենի, ով պատասխանատու պաշտոններ է վարել իրավապահ մարմիններում, փնտրություններն ապարդյուն են անցել. հայրենիքի զինվորը համարվում է անհայտ կորած...

1943-1944թթ. ուստարում դպրոց հաճախեց, մայրը որտեղ պատահի՝ աշխատել է մի կտոր հաց հայթայթելու, որդուն ու դստերը կերակրելու համար: Պատերազմ մեկնած հոր կոշիկներն ու վերարկուն էր հագնում երրորդ-չորրորդ դասարանում, մի կոշիկի մեջ երկու ոտնաթաթը տեղավորվում էր, վերարկուն տաք էր պահում, բայց այնքան երկար էր, որ գետնով քարշ էր լինում: Մանկության ամենապայծառ հուշերից մեկն այն էր, որ մայրը կոշիկ գնեց իր համար, որ երբեք չէր ունեցել: Առաջինը մայրն էր ուրախացել, հետո՝ ինքը:

Ծանր ու դժվարին ժամանակներ էին: «Բայց այդ տարիներին գաղափար չունեինք, թե ինչ է դասից ուշանալը կամ դասը չսերտած դպրոց հաճախելը, մինչեւ «չորս» գնահատականը «հինգ» չէր դառնում, ոչ մեկի երեսին չէինք նայում», - դպրոցական տարիների հուշերն է ներկայացնում 80-ամյա այրը: Միջնակարգն ավարտելուց հետո երկու տարի օգնեց մորը եւ մեկնեց պարտադիր զինվորական ծառայության:



1959-ին զորացրվեց, եւ հենց այդ տարում լեռնամետալուրգիական տեխնիկումը Երեւանից տեղափոխվեց Գափան, էջ 6

# Կապանը փոխեց քաղաքի կարգավիճակ սպանակու 79-րդ փարեդարձը

Հոկտեմբերի 21-ին Կապանը տունեց քաղաքի կարգավիճակ ստանալու 79-րդ տարեդարձը: Տոնական օրը նշանավորվեց կապանցի Սինոնյանների ընտանիքում ապրիլին ծնված եռյակի մկրտությամբ, մարզական եւ մշակութային տարբեր միջոցառումներով:

Օրվա մեկնարկը տրվեց Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցուն փոքրիկ Սերյոժայի, Կարմելայի եւ Սառայի մկրտությամբ (կնքահայր՝ Կապան համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյան): Արարողությունից հետո եկեղեցու հոգևոր հովիվ տեր Վահան քահանա Հեքոյանը, շնորհավորելով տոնի առթիվ, օրհնության խոսք հղեց ներկայացրին:

Բաղաբուրջի եւ Գարեգին Նժդեհի հուշահամալիրներում ծաղկադրում կատարվեց՝ ի հիշատակ մեր ինքնությունը պահպանած, անկախությունը կերտած հայրերին: Բաղաբուրջի հուշահամալիրում «Երկրապահ կամավորականների միության» վարչության նախագահ Մանվել Գրիգորյանի կողմից ՀՀ անկախության 26-ամյակի եւ «Կապանի օր» տոնի առթիվ ԵԿՄ մեդալներ հանձնվեցին համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանին, մի շարք այլ անձանց, պատանի երկրապահներին, վերջիններիցս ունանց էլ՝ պատվոգրեր:

Ավանդական դարձած կրոսավազքի եւ հեծանվավազքի մրցումներին մեծ ոգեւորությամբ էին սպասում հատկապես դպրոցահասակ երեխաները: Ողջունելի էր նրանց կազմում ավելի մեծահասակների մասնակցությունը: 150 հոգի կրոսավազքում, 100 հոգի հեծանվավազքում չափեցին իրենց ուժերը, արդյունքում բոլոր 250 հոգին էլ «Վորլդ Վիժն» տարածքային զարգացման ծրագրի կողմից արժանացան մվերների: Մրցություն աղջիկների եւ տղաների խմբերում 1-ին, 2-րդ եւ 3-րդ մրցանակային տեղ զբաղեցրած մասնակիցները համայնքապետարանից ստացան հավաստագրեր եւ մարզահագուստ, իսկ հեծանվավազքում 1-ին տեղ զբաղեցրածները՝ նաեւ հեծանվով:



Աշոտ Հայրապետյանը քաղաքի տարեցների հետ կտրեց ավանդական տորթը, որը պատրաստել էր քաղաքապետին կից երիտասարդական խորհուրդը: Այն բաժանվեց ներկայից, տարբեր թաղամասերում եւ հատուկ կարիքներով ու սոցիալական ուղղվածությամբ կրթական եւ այլ հաստատությունների շահառուներին:

Տոնական օրվա երկրորդ կեսը նշանավորվեց ՀՀ ժողովրդական արտիստուհի Գայա Նովենցի հուշատախտակի բացմամբ, Կապանի արվեստի մանկական դպրոցի նորամուտով, Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճի ճեմասրահում Շ.Մովսիսյանի անվան պատմության թանգարանի պատրաստած «Հին ու նոր Կապան» խորագրով լուսանկարչական աշխատանքների ցուցադրությամբ, տոնական համերգով, իսկ երեկոն՝ հրավառությամբ:

Թունանյան 18 հասցեում գտնվող շենքում, որտեղ 1959-62թթ. ապրել է բոլորիս շատ սիրելի դերասանուհի, ՀՀ ժողովրդական արտիստուհի Գայա Նովենցը, բացվեց նրա հուշատախտակը (հեղինակ՝ Լորիկ Մինասյան):

Բացմանը ելույթի խոսքով հանդես եկան Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արթուր Գաբրիելյանը, բանաստեղծ, թարգմանիչ Գագիկ Դավթյանը, Կապանի պատվավոր քաղաքացի Սվետլանա Գեւորգյանը, թատրոնի տնօրեն Կամո Արզումանյանը, համայնքապետ Աշոտ Հայրապետյանը, ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Երվանդ Ղազանջյանը: Վերջինս նախ շնորհակալություն հայտնեց Կապանի քաղաքապետարանի այս նախաձեռնությունն իրականություն դարձնելու համար: Նա իր խոսքում մասնավորապես նշեց. «Մեր սերունդը բախտավոր է՝ ի դեմս Գայայի, եթե ուրիշ ոչինչ չլինի, բավական է ասել՝ դերասանուհի, ով նկարահանվել է Միեր Մկրտչյանի, Սոս Սարգսյանի, Խորեն Աբրահամյանի, Արմեն Զիգարխանյանի հետ: Հիմա, դժբախտաբար, գրեթե բոլոր թատրոններում չենք կարող մասնագույց անել մեկին, թե ինչպես է քայլում, ինչպես է ծխում, ինչպես է փռչում... Դժբախտաբար, հի-

տանի տարածքային զարգացման հիմնադրամի հաստատությունների օժանդակության վարչության պետ Արամ Գրիգորյանը, Սվետլանա Գեւորգյանը, Աշոտ Հայրապետյանը, իսկ կարմիր ժապավենը կտրեցին դպրոցի երկարամյա տնօրեն Սերյան Գրիգորյանը, Արամ Գրիգորյանը եւ Մարինա Նահապետյանը: Շրջելով վերանորոգված դպրոցում, ծանոթանալով կատարված աշխատանքներին ներկայները դահլիճում հնարավորություն ունեցան վայելել ուսուցիչների մասնակցությամբ ցերեկույթի հաճելի ակնթարթները: Շնորհավորանքի խոսք ասաց նաեւ բանաստեղծուհի Մարի Առաքելյանը՝ ներկայացնելով Կապանին նվիրված եւս մեկ ստեղծագործություն:

Մինչ Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճ մտնելը միջոցառման ներկայները ճեմասրահում հնարավորություն ունին լուսանկարների միջոցով տեսնել հին ու նոր Կապանը:

«Երկրիս քարե սրտում-քաղաք» խորագրով տոնական համերգի ընթացքում շնորհավորական ուղերձներ հնչեցրին Կապանի համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանը, բանաստեղծ, թարգմանիչ Գագիկ

մա մի քիչ ամայության շրջան է թատրոններում, բայց, վատահ եմ, որ հայ մայրերի արգանդը չի չորացել, կգա ժամանակ, որ նորից հայ թատրոնը կծնի մեծեր»: Հու-



Հատախտակի բացման պատիվը տրվեց Գայա Նովենցի եւ Երվանդ Ղազանջյանի թոռնուհուն Մարիամին, ով նույնպես դերասանուհի է, եւ ծոռնուհուն Նարեհին:

Տոնակատարության հաջորդ կանգառը հիմնանորոգված Կապանի արվեստի մանկական դպրոցն էր, որտեղ հյուրերին պարային համարով ողջունեցին դպրոցի դասատուներն ու սաները: Դրանից հետո դպրոցի տնօրեն Մարինա Նահապետյանն իր խոսքով շնորհակալություն հայտնեց Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին, Կապանի համայնքապետարանին, «Կապանի նորոգչին» ՍՊԸ-ին, բոլոր այն մարդկանց, ովքեր նպաստեցին դպրոցի հիմնանորոգման աշխատանքներին, ուսուցիչներին ու սաներին: Նա նշեց, որ դպրոցն իր աշխատանքները կսկսի իրականացնել նորովի, այն հավատով, որ «կրթության որակը բարձրացնելու ենք եւս մի քանի աստիճան, ու մեր աշակերտները նոր եռանդով շարունակելու են փայլել հանրապետական եւ միջազգային հարթակներում»: Շնորհավորանքի խոսքով հանդես եկան Հայաս-

Դավթյանը, Երվանդ եւ Հակոբ Ղազանջյանները: ԵԿՄ վարչության նախագահ, Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի շնորհավորանքի խոսքը փոխանցեց ԵԿՄ վարչության անդամ Վարդան Պետրոսյանը, օրհնության խոսք հնչեցրեց Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևոր հովիվ, արժանապատիվ տեր Վահան քահանա Հեքոյանը: Ի դեպ, թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանջյանը թատերական գործիչների միության նախագծերին, մասնավորապես «Թատերական Սյունիք-2017» փառատոնին աջակցություն ցուցաբերելու համար ոսկե մեդալով պարգևատրեց Կապանի համայնքապետ Աշոտ Հայրապետյանին:

Պաշտոնական ելույթներին հաջորդեց տոնական համերգը՝ մշակույթի կենտրոնի պարային համույթների եւ անհատ կատարողների երաժշտական համարներով, որոնցից որոշները հնչում էին առաջին անգամ:

ԱՐՄԻՆԵ ՀԱՌՈՒԹՅՈՒՆՅԱՆ



# Նորայր Եսայան. «Հարժիսի դպրոցի հրատապ լուծում պահանջող հարցը շենքի տանիքի հիմնանորոգումն է»

- Պարոն Եսայան, մեր օրերում դժվար թե հանդիպենք այնպիսի մարդու, ով, հանրության շրջանում ավելի բարձր նիշ ունեցող աշխատանք ունենալով, ցանկություն հայտնի վերադառնալ հայրենի գյուղ եւ դառնալ տեղի դպրոցի տնօրեն: Ինչո՞վ կբացատրեք Ձեր՝ ընդօրինակման արժանի այդ քայլը:

- Երբեք ծննդավայրից չեմ կտրվել, ապրել եմ հայրենի գյուղի հոգսերով, դրանք նաեւ ինձ համարել: Այդ առումով գյուղի դպրոցի վիճակն ինձ խիստ անհանգստացնում էր, ցավ էի ապրում այնտեղ առկա խնդիրների համար: Բանն այն է, որ ծնողներս լուրջ ավանդ ունեն գյուղի դպրոցաշինության գործում, եւ Հարժիսի դպրոցի նախկին փառքի վերականգնման մղումն ինձ բերեց դպրոց. չէ՞ որ այս դպրոցը ժամանակին եղել է հանրապետության լավագույն դպրոցներից, տվել բազում շրջանավարտներ, ովքեր այսօր իրենց արժանի տեղն են գտել տարբեր ոլորտներում: Վերջին շրջանում դպրոցի առաջընթացը որոշակիորեն տեղի տվեց, ուստի ցանկություն կա կրկին բարձրացնել դպրոցի դերը: Բարդ է, իհարկե, բայց միտում կա, այն, որ աշխատում ենք հայրենի գյուղի բարգավաճման համար, արդեն իսկ ոգեւորություն է առաջացնում: Ավելին երբ ինչ-որ բան անելուց հետո զգում ես թե՛ աշակերտների, թե՛ համայնքի բնակիչների ոգեւորությունը, դա ավելի է թելեր տալիս: Ամենակարեւորը, որ թե՛ աշակերտները, թե՛ ուսուցչական կոլեկտիվը, թե՛ համայնքի բնակիչները մասնակից են այս գործընթացին: Հրավիրված ընդհանուր ծնողական ժողովին հորդորել եմ բոլորին հնարավորինս մասնակցել դպրոցում կատարվող գործընթացներին, իրադարձություններին, մասնավորապես մեր գործելաձևում որդեգրել ենք բաց եւ թափանցիկ աշխատելաձևը: Ճիշտ է, կատարված աշխատանքի արդյունքը տեսնելը ոգեւորիչ է, բայց մեր դեպքում դեռեւս այն սպասելի տեսքով տեսանելի չէ. կարեւորը մեր առջեւ դրված



**Նորայր Եսայան. ծնվել է 1973թ. Հարժիսում, տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի «Պատմություն եւ իրավագիտություն» ֆակուլտետը, որն ավարտել է 1996թ.՝ պատմության եւ իրավագիտության ուսուցչի որակավորմամբ: Այնուհետեւ ընդունվել է նույն ինստիտուտի ասպիրանտուրա՝ հայոց պատմության գծով, թեկնածուական ատենախոսության թեման եղել է «Սիմոն Զավարյանի կյանքն ու գործունեությունը», որը, սակայն, դեռ չի պաշտպանել, բայց աշխատում է այդ ուղղությամբ: 2001թ.-ից առ այսօր աշխատում է այն ժամանակի ՀՀԳԳԻ Գորիսի մասնաճյուղում, որ 2006թ.-ից վերակազմակերպվել է Գորիսի պետական համալսարանի: 2017թ. հուլիսի 3-ին ընտրվել է «Հարժիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն:**

նպատակն է, ինչին կկարողանանք հասնել միասնական ուժերով:  
- **Համառոտ ներկայացրեք Հարժիսի միջնակարգ դպրոցի բնութագիրը:**  
- Հարժիսի միջնակարգ դպրոցում այս պահին սովորում է 80 աշակերտ՝ 12 դասարանով, որից 3 դասարան՝ 0.75 դրույթով: Արտագաղթը լուրջ հարված է հասցրել աշակերտների թվաքանակին. նախանցյալ տարի դպրոցում սովորում էր 109 աշակերտ, անցյալ տարի՝ 89:  
Այս տարվա հուլիս-օգոստոս ամիսներին գյուղից հեռացել է 7 դպրոցահասակ երեխա: Ըստ նախնական տվյալների՝ գալիք ուստառում կունենանք 10 առաջին դասարանցի, եթե մինչեւ սեպտեմբեր գյուղը չլքեն: Ունենք իրաշալի կոլեկ-

տիվ՝ համարված արհեստավարժ մանկավարժներով, խոստումնալից երիտասարդ կադրերով: Դպրոցում մաթեմատիկայի ուսուցչի խնդիր կար, բայց այդ հարցը նույնպես լուծվել է, ինչից թե՛ աշակերտները, թե՛ ծնողները զոհ են: Առհասարակ լինելով պատմաբան՝ շատ մեծ տեղ եմ տալիս բնագիտամաթեմատիկական առարկաներին, ինչից էլ կախված կլինի մեր նորաբաց «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի հետագա գործունեությունը եւ հաջողությունները:  
Ուսուցիչներին ասել եմ, որ մեր նպատակն արդյունք տալն է՝ մեր հնարավորությունների, աշակերտների ներուժի սահմաններում, այլ ոչ թե միայն դասարան մտնել դուրս գալը:  
- **Ո՞րն է դպրոցի՝ հրատապ լու-**

**ծում պահանջող խնդիրը:**  
- Ընդհանուր առմամբ դպրոցի շենքի վիճակին կարելի է տալ օրհասական, ծայրահեղ բնութագրումը: Ժամանակին լեհական մի ծրագրի շրջանակներում վերանորոգվել են դասասենյակներ, բայց, եթե շենքի տանիքը շուտափույթ չվերանորոգվի, այդ վերանորոգման իմաստը կկորչի: Շենքի սեյսմակայուն վիճակը վերջերս են ստուգել, բայց դեռեւս եզրակացությունը չեն ուղարկել: Տանիքի պատճառով արտաքին եւ ներքին պատերի լուրջ վնասվածքներ են առաջացել, անկյունում քարերը թափվել էին, ճիշտ է, անձնական միջոցներով պատը վերականգնեցինք, բայց նորից ասեմ, եթե տանիքը չվերականգնվի, այդ արածն էլ իր իմաստը կկորցնի: Այդ հարցի լուծման համար դիմել եմ տարբեր միջազգային կազմակերպությունների, «Հայաստան» համահայկական հիմնադրամին, մի խոսքով՝ անընդհատ տարբեր առայաններում բարձրաձայնում եմ այդ խնդրի մասին: Վատթար վիճակում է նաեւ դպրոցի մարզադահլիճը, իսկ տանիքով պայմանավորված խոնավությունից շենքի հատկապես անկյունային մասերում վթարային վիճակ է ստեղծվել: Անկախ Հայաստանի ժամանակաշրջանում շենքը ոչ մի անգամ չի վերանորոգվել, նույնիսկ վերջերս, երբ եկել էին շենքի սեյսմակայունությունը ստուգելու, մասնագետները նշեցին, որ ասբեղիֆերից տանիք այսօր Հայաստանում շատ հազվադեպ է հանդիպում: Եթե տանիքի վերանորոգման հարցը լուծվի, մնացածն ընթացիկ հարցեր են եւ ժամանակի ընթացքում կկարգավորվեն:

- **Չնայած Դուք դեռ մեկ ամսից ավելի է, ինչ պաշտոնավարում եք, բայց կուզենայինք խոսել աշակերտների հաջողություններից:**  
- Դպրոցում կան լավ աշակերտներ, ովքեր մասնակցում են դպրոցականների առարկայական օլիմպիադաներին, ուսումը շարունակում հանրապետության տարբեր բուհերում: 12-րդ դասարանի աշակերտ Արտյոն Բայանը, եթե չեմ սխալվում, անցյալ տարի ֆրանսերենից մարզային փուլում գրավեց երկրորդ, նախանցյալ տարի՝ առաջին մրցանակային տեղը: Անցյալ տարվա շրջանավարտներից երեք հոգի ընդունվել է Գորիսի պետական համալսարան, երկու հոգի՝ Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարան: Այս տարի կավարտի ութ հոգի, այս պահին հաստատ գիտեմ, որ մեկ հոգի կդիմի բուհ: Ընդհանուր առմամբ երեխաների շրջանում ուսման հանդեպ սեր ու հետաքրքրություն կա, մանկավարժներին ասել եմ, որ պետք է այդ ներուժը զարգացնել, արդյունք ապահովել ոչ թե գնահատականներով, այլ ձեռք բերած գիտելիքներով: Ոգեւորություն նկատում եմ թե՛ երեխաների, թե՛ ծնողների շրջանում, ինչը, համոզված եմ, մի քիչ ուշացումով, բայց արդյունք կտա:  
- **Կրթության բնագավառում հատկապես վերջերս խոսվում են տարբեր փոփոխությունների մասին, Ձեր կարծիքը՝ դրանց վերաբերյալ:**  
- Հատկապես կարեւորում եմ ԿԳ նախարար Լեւոն Մկրտչյանի հայտարարած «Ուսուցիչ» նախաձեռնությունը, որը, հուսով եմ, գործող ծրագիր կդառնա եւ բոլոր ուսուցիչներին «հավասար աչքով նայելու» հնարավորություն կընձեռնի: Ինչ վերաբերում է դպրոցների օպտիմալացմանը, առայժմ դա մեր դպրոցին չի վերաբերում: Անկեղծ ասած, քիչ թվաքանակով աշակերտ ունեցող դպրոցի զարգացման ընթացքն ավելի դժվար է: Այստեղ շատ եմ կարեւորում ուսուցիչների մրցակցությունը, ինչը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մեկ դպրոցում տվյալ առարկայից մի քանի ուսուցիչ է դասավանդում: Օպտիմալացումը, իհարկե, ունի եւ առավելություններ, եւ թերություններ: Համայնքն առանց դպրոցի լիարժեք չի կարող լինել:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱԼ

## Կապանի ԼՇԿ արտադրական արդյունքները 3-րդ եռամսյակում

«Պոլիմետալ» ընկերության՝ 2017թ. հոկտեմբերի 16-ին հայտարարված արտադրական արդյունքների համաձայն՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատը 2017թ. երրորդ եռամսյակում (սեպտեմբերի 30-ին ավարտված երեք ամիսը) արդյունահանել է 149 հազ. տոննա եւ վերամշակել 143 հազ. տոննա հանքաքար: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ արդյունահանման ծավալն ավելացել է 33%-ով, վերամշակմանը՝ 23%-ով:  
Արտադրության ծավալները 2017թ. երրորդ եռամսյակում կազմել են 0.2 տոննա ոսկի, 3.1 տոննա արծաթ, 300 տոննա պղինձ եւ 1300 տոննա ցինկ:  
2017թ. առաջին ինն ամիսների ընթացքում Կապանի լեռնահարստացման կոմբինատն արդյունահանել է 399 հազ. տոննա, վերամշակել 389 հազ. տոննա հանքաքար, արտադրել 0.7 տոննա ոսկի, 12.4 տոննա արծաթ, 900 տոննա պղինձ եւ 3600 տոննա ցինկ:  
Արդյունահանման եւ վերամշակման ծավալների աճը ստորգետնյա հանքի արտադրողականության ավելացմանն ուղղված միջոցառումների արդյունք է: Օգոստոսին հարստացման ֆաբրիկան գրանցել է արտադրողականության նոր ռեկորդ՝ մեկ ամսում վերամշակելով 51 հազ. տոննա հանքաքար:  
Լիճքվազ-Թեյի հանքավայրում սկսվել են նախապատրաս-



տական աշխատանքներ, իրականացվում է հանքուղու ընդլայնում նախապատրաստական եւ կտրման փորվածքների անցման համար, որն իրականացվելու է 2018թ.:  
Производственные результаты Капанского ГОКа в третьем квартале

Согласно производственным результатам компании «Полиметалл», объявленным 16 октября 2017 года, Капанский ГОК в III квартале (3 месяца, закончившиеся 30 сентября) 2017 года добыл 149 тыс. тонн и переработал 143 тыс. тонн руды. По сравнению с аналогичным периодом прошлого года объем добычи увеличился на 33%, объем переработки увеличился на 23%.  
Объемы производства в III квартале 2017 года составили 0.2 тонн золота, 3.1 тонн серебра, 300 тонн меди и 1300 тонн цинка. За первые 9 месяцев 2017 года на Капансом ГОКе добыто 399 тыс. тонн и переработано 389 тыс. тонн руды, произведено 0.7 тонн золота, 12.4 тонн серебра, 900 тонн меди и 3600 тонн цинка.  
Увеличение объемов добычи и переработки - результат внедрения мер по повышению производительности подземного рудника. В августе обогатительная фабрика установила новый рекорд по производительности, переработав 51 тыс. тонн руды за один месяц.  
На Личквас-Тейском месторождении начались подготовительные работы и расширение штольни для последующей проходки подготовительных и нарезных выработок в 2018г.

# Նվիրված բեմի երախտավորների հիշատակին

Կապանցի թատերասերներին այս անգամ հոկտեմբերի 22-ին, Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոն էր բերել հանդիսությունը՝ նվիրված 33 ժողովրդական արտիստներ, 33 պետական մրցանակի դափնեկիրներ, Կապան քաղաքի պատվավոր քաղաքացիներ Գայյա Նովենցին եւ Երվանդ Ղազանջյանին: Վեց տասնամյակ առաջ հայ բեմի երկու երախտավորի՝ Արմեն Գուլակյանի եւ Վարդան Աճեմյանի կուրսի շրջանավարտները՝ տասնյակից ավելի նորաթուխ դերասաններ, եկան վերածնելու Կապանի թատրոնը, եւ այդպես էլ եղավ: Նրանց հետ էին Երվանդ Ղազանջյանն ու Գայյա Նովենցը, ովքեր մոտ չորս տարի Կապանի թատրոնում բեմական կենսագրություն հյուսեցին:

Իսկ Երվանդ Ղազանջյանը նշեց, որ զարմանալի հուշեր կան կապված Կապանի թատրոնի հետ, որ չեն մոռացվում. «**Լցվում էինք մի բեռնատարի թափքի մեջ, որի մի մասում դեկորներն էին լինում, մյուս մասում մենք էինք տեղավորվում: Ձարմանալի մի եռանդ կար բոլորիս մեջ, որտեղ գնում էինք հյուրախաղերի, բավականին թափփված էին բեմերը, դահլիճների մասին էլ չեմ խոսում: Մենք մինչեւ չլվանայինք, չմաքրեինք բեմը, դեկորները**

ինքն էլ անբուժելիորեն վարակվեց թատերական «հիվանդությամբ», իսկ թատրոնն իր ներկայացումներով, իր դերասաններով մեծ ազդեցություն թողեցին իր թատերական եւ գրական ճաշակի վրա: Ելույթի ավարտին Գագիկ Դավթյանն իր ստեղծագործությունների երեք հատորյակը նվիրեց հորեյարին: Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Կամո Արզումանյանը երախտագիտություն հայտնեց Երվանդ Ղազանջյանին եւ Գայյա Նովենցին, ովքեր իրենց զավակներին դաստիարակեցին այնպիսի ոգով, որ 3ակոր եւ Ստեփան Ղազանջյանները եկան Կապանում աշխատելու, մեկը՝ գեղարվեստական ղեկավար եւ բեմադրիչ, մյուսը՝ դերասան: Փաստորեն, ընտանեկան ավանդույթների սկիզբ դրվեց, իսկ թատրոնը նոր որակներ ձեռք բերեց: Դրա վկայությունն է այն, որ կապանցի դերասանները հյուրախաղերով հանդես եկան Մոսկվայի Մայակովսկու անվան թատրոնի բեմում, ինչին անդրադարձան ռուսական մամուլն ու ռուս թատերագետները: Կապանի թատրոնի դերասան Արտավազդ Գրիգորյանը եւս բարեմաղքանքի խոսքեր ասաց՝ Երվանդ Ղազանջյանին իր ուսուցիչը համարելով: Երվանդ Ղազանջյանին ջերմությամբ եւ անկեղծությամբ լի խոսքեր հղեցին թոռնուհին Մարիամը, եւ ծոռնուհին՝ Նարեն:

Ելույթներն ընդմիջվում էին գրական-երաժշտական կատարումներով: Ալ.Շիրվանզադեի անվան թատրոնի դերասանները ներկայացրին մի հատված «Բակունցյան գույներ» գրական խորեոգրաֆիկ բեմադրությունից, Կապանի արվեստի մանկական դպրոցի թատերարվեստի բաժնի սաները հանդես եկան 3ովի.Թունանյանի «Կիկոսի մահը» բեմադրությամբ: 3նչեցին երգեր. արվեստի մանկական դպրոցի դասատու Ջառա Շամոյանը կատարեց «Ես լսեցի մի անուշ ծայն» երգը (խոսք՝ Սմբատ Շահազիզի, երաժշտությունը՝ Ռոմանոս Մելիքյանի), Կապանի N2 երաժշտական դպրոցի սան, Գյումրու «Վերածնունդ» 8-րդ միջազգային փառատոնի առաջին կարգի դափնեկիր Արտյոմ Սարգսյանը (դասատու՝ Իրինա Դավիդյան)՝ գուսան 3այկազունու «Գետաշենը»: Եղան պարային կատարումներ, Կապանի մանկական ստեղծագործական կենտրոնի սաները կատարեցին «Եգիմայի» պարը Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետից (պարուսույց՝ Գայանե Վարդիկյան), Կապանի արվեստի պետական քոլեջի պարարվեստի բաժնի սովորողները՝ «3արսնապար» (պարուսույց՝ Թամարա Ստեփանյան):

3անդիսության ավարտին Երվանդ Ղազանջյանը երախտագիտություն հայտնեց միջոցառումը նախածնողներին, թատերասերներին, բոլոր կապանցիներին, թատրոնին փոխանցեց մի մատուցած մեծն Ավետ Ավետիսյանի՝ իրեն նվիրած խորհրդանշական խաչը:

ՎԱՐՄԱ ՕՐԲԵՆՅԱՆ

# Արգինե Սահակյան. «Համահայկական համաժողովները շատ լավ հնարավորություն են ընձեռում Հայաստան-Սփյուռք համագործակցության, սփյուռքահայ մեր ազգակիցների հետ շփման համար»

Սեպտեմբերի 18-20-ն ընկած ժամանակահատվածում կայացավ «Փոխադարձ վստահություն, միասնականություն եւ պատասխանատվություն» խորագրով «3այաստան-Սփյուռք» 6-րդ համահայկական համաժողովը, որին Սիսիանից, որպես «Օգնություն 3այաստանին» հանձնախմբի անդամ, մասնակցում էր երիտասարդ գեղանկարիչ Արգինե Սահակյանը: 3ամաժողովի ընթացքի, որոշ դիտարկումների մասին է գրույցը Արգինե Սահակյանի հետ:

## Տիկին Սահակյան, քանի որ առաջին անգամ ենք մեր թերթի շրջանակներում անդրադառնում Ձեզ, ներկայացրեք մեր ընթերցողին:

Ճնվել եմ Սյունյաց աշխարհի գեղատեսիլ վայրերից մեկում՝ Շողուկ գյուղում, որտեղի ընտանիքում, մանկությունս անցել է բնության եւ մաքրության գրկում: 3այրս որսորդ էր, մայրս երկար տարիներ ղեկավարել է գյուղի մշակույթի ակումբը, կազմակերպել բազմաթիվ միջոցառումներ, մեր ընտանիքում հյուրընկալել ենք նշանավոր մարդկանց, որտեղից էլ սկիզբ է առել իմ սերը մշակույթի հանդեպ: Երկար տարիներ զբաղվել եմ սպորտով, բայց գեղանկարչությունը միշտ իմ անբաժանելի մասն է եղել: Ինձ հոգեհարազատ, նաեւ ազգական, նշանավոր քանդակագործ Գետիկ Բաղդասարյանի խորհրդով ընդունվել եմ Սիսիանի հունամիտար քոլեջի «Ջարդային կիրառական արվեստ եւ ժողովրդական արվեստներ» բաժնի, այժմ՝ երկար տարիների ընդմիջումից հետո, սովորում եմ Գորիսի պետական համալսարանի «Տարրական մանկավարժություն եւ մեթոդիկա» ֆակուլտետում: Ժամանակին աշխատել եմ Սիսիանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում, բայց դիպայներական խմբի փակվելուց հետո չեմ աշխատել: Մասնակցել եմ տարաբնույթ դասընթացների, ցուցահանդեսների ու փառատոների: Բացի մասնակցությունից՝ ինքս եմ հանդես եկել տարբեր մշակութային միջոցառումների անցկացման նախածնողությամբ:

Ամունացել եմ, ժամանակիս մեծ մասը նվիրելով ընտանիքիս՝ միեւնույն ժամանակ չեմ դադարում ստեղծագործել:

## Ինչպե՞ս ստացվեց, որ մասնակցեցիք «3այաստան-Սփյուռք» վեցերորդ համաժողովին:

Սեկ ամիս առաջ Շվեդիայից «Շտապ օգնություն 3այաստանին» բարեգործական կազմակերպության ատենապետ Լորանս Շառոյանը Սիսիանում էր, ով Սիսիանի բժշկական կենտրոնի համար բժշկական իրեր, առաջին բուժօգնության պարագաներ էր բերել: Շվեդիայում ամուսնին բուժում ստանալու ժամանակահատվածում է ծանոթացել հայ համայնքի ներկայացուցիչների, այդ թվում՝ Լ.Շառոյանի հետ, եւ երբ տեղեկացանք, որ նրանք ցանկանում են որպես օգնություն 3այաստան ուղարկել բժշկական պարագաներ, կապ հաստատեցինք եւ կարողացանք այդ օգնությունը հասցնել Սիսիանի բժշկական կենտրոն:

Քանի որ Շվեդիայից «Շտապ օգնություն 3այաստանին» հանձնախմբի անդամ եմ, ինձ առաջարկեցին մասնակցել համաժողովին (իրենք չեն կարողացել ներկա գտնվել), եւ ես մեծ սիրով համաձայնեցի:

## 3ամառոտ ներկայացրեք, «3այաստան-Սփյուռք» 6-րդ համահայկական համաժողովի, դրա անցկացման նպատակների մասին:

33 եւ հայկական Սփյուռքի համար կարեւոր նշանակություն ունեցող հիմնախնդիրների լուծման գործում սփյուռքի համակարգված մասնակցության ապահովման, Սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային եւ այլ ոլորտներում առկա ներուժի հայտնաբերման, համախմբման եւ արդյունավետ կիրառման նպատակներով կազմակերպվում են 3այաստան-Սփյուռք համահայկական համաժողովները, որոնք 3այաստան-Սփյուռք գործակցության կարեւորագույն հանգրված են դարձել: Առաջին անգամ այն տեղի է ունեցել 1999թ. սեպտեմբերին: Այս տարի սեպտեմբերի 18-20-ն ընկած ժամանակահատվածում անցկացվեց «3այաստան-սփյուռք» 6-րդ համահայկական համաժողովը՝ «Փոխադարձ վստահություն, միասնականություն եւ պատասխանատվություն» խորագրով, որին մասնակցում էր ավելի քան 1400 հոգի, ընդգրկվել էին աշխարհի 71 երկրի հայկական տարբեր կառույցներից ներկայացուցիչներ:

Իմ կարծիքով՝ այս համաժողովը յուրահատուկ կամուրջ է 3այաստանի եւ Սփյուռքի միջեւ բոլոր առումներով. Սփյուռքի հետ սերտ համագործակցությունը կարող է մեծ դեր խաղալ մեր հանրապետության կայունացման, զարգացման գործում: 3ամաժողովի քննարկումներն անցել են բարձր մակարդակով, եւ այնտեղ տեսա սփյուռքի ուժը, կորիզը, որ կարող է փոխադարձ վստահության պայմաններում խոսք գործի վերածել: Ընդհանրապես կցանկանայի, որ 33-ում անցկացվող բոլոր քննարկումները, հանդիպումներն անցնեին այդպիսի բարձր մակարդակով, ջերմ մթնոլորտում՝ ընդգրկելով տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց (դեռես 15-րդ դարում Վերածննդի նշանավոր ներկայացուցիչ Լեոնարդո դա Վինչին մասնակցում էր իրենց երկրում անցկացվող բոլոր ժողովներին, ինչը երկրի զարգացման գործում նշանակալի ազդեցություն էր ունենում):

Եվ չնայած մեր ռազմավարական ծրագրի համաձայն 33-ում մինչեւ 2040թ. 4 մլն մարդ պետք է բնակվի, բայց, իմ կարծիքով, այն իրականություն կդառնա միայն մարդկանց սոցիալական պայմանների բարելավման պայմաններում: Միայն բարեկեցիկ 3այաստանում, ամուր հիմքերով պետությունում մշտական բնակություն կհաստատի սփյուռքահայը: Պետք է հստակ ծրագրեր մշակվեն, եւ միայն համաժողովին մասնակցելու էական նշանակություն չի կարող ունենալ, անհրաժեշտ են կոնկրետ գործողություններ:



Տանտիրոջ իրավունքով ներկաներին եւ հորեյարին բարեմաղքանքներ հղեց Կապանի քաղաքապետ Աշոտ 3այրապետյանը, նշելով, որ ինքը դեռես երեւանի 3ակոր Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում կայացած Երվանդ Ղազանջյանի եւ Գայյա Նովենցի 80-ամյա հորեյարին նվիրված հանդիսության տպավորության ներքո է եւ համոզմունք հայտնեց, որ այս հանդիսությունը եւս նույնպիսի մթնոլորտում կանցնի:

Իրոք, մտերմիկ մթնոլորտում անցավ հանդիսությունը, որ վարում էր Երվանդ Ղազանջյանը. «Այս երեկոն թող լինի իմ կարոտի պատասխանն անցած-գնացած օրերի, շատ եմ ուզում, որ մեր հանդիպումը բնական լինի՝ կարոտով, հույզերով, շատ հարգատ ղեմքեր տեսա այստեղ, որ կային իմ մտապատկերում, որ դրոշմվել էին իմ սրտում: Թող սա անկեղծ գրույց-հանդիպում լինի, եւ այդ գրույցի կենտրոնում լինի Գայյան, որովհետեւ երախտապարտ եմ կապանցիներին, քանզի երեկ հանդիսավորությամբ բացվեց նրա հուշատախտակը Թունանյան 18 հասցեում»:

չէինք տեղադրում եւ սկսում ներկայացումը: Այդ տարիներից մեր մեջ ձեւավորվել էր հարգանք հանդիսատեսի հանդեպ: 3անդիսատեսին կորցնել չի կարելի, այնպես չէր, որ մտածում էինք, թե այսօր այս զգեստը չհագնեմ, ուրիշ բան հագնեմ: Էդ ուրիշ բան հագնելը կնշանակեր հինգ-տասը հանդիսատես կորցնել: 3անդիսատեսին չի կարելի անհասկացողի տեղ դնել»: Այս համատեքստում հորեյարն անդրադարձավ մեր օրերում մեծ տարածում ստացած սերիալներին, նշելով, որ դրանց վնասը ոչ մի թուրք չի կարող հասցնել. «Մենք ուզում ենք ինչ-որ բան առաջ տալ, նրանք (սերիալ ստեղծողները, խմբ.) ասում են, չէ, ժողովուրդը դա է ուզում, ինչպե՞ս կարող է ժողովուրդը դա ուզի, դուք շարունակում եք մեզ փչացնել, մենք ծիծաղե՞նք: 2ի կարող սման բան լինել»:

Բանաստեղծ-բարգմանիչ Գագիկ Դավթյանը հիշեց, որ ինքը 11 տարեկան էր, երբ Երվանդ Ղազանջյանն ու Գայյա Նովենցն իրենց համակուրսեցիների հետ եկան Կապան, եւ սկիզբ առավ Կապանի թատրոնի վերածնունդը, եւ կեսկատակ, կես-լուրջ ավելացրեց, որ

# Այոնիքը՝ կրթության եւ մշակույթի օջախ Գիտաժողով Գորիսի պետական համալսարանում



էջ 1 ՀՀ մշակույթի նախարարության, «Երկիր եւ մշակույթ» կազմակերպության, Կրթության ազգային ինստիտուտի, Իրանի Իսլամական Հանրապետության Սպահանի համալսարանի պատվիրակությունները, գիտության եւ մշակույթի գործիչներ:

նեկտոր, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտուշ Դուկասյանը: Ներկաներին ողջունեց Արցախի պետական համալսարանի նեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մանուշ Մինասյանը: Գիտաժողովի մասնակիցներին ուղերձ էր հղել Երեւանի թատրոնի

դոցենտ Արմեն Հարությունյանը: Բացման արարողությանը պաշտոնապես ներկայացվեց Գորիսի պետական համալսարանի նորաստեղծ օրհներգը (խոսք՝ Տիգրան Գրիգորյանի, երաժշտությունը՝ Արկադի Շեկունցի):

Գիտաժողովի աշխատանքներն ընթացան հետեւյալ մասնախմբերում՝ 1)Պատմություն, հնագիտություն, ազգագրություն, արվեստ (նախագահողներ՝ Ալբերտ Խառատյան, Գեորգ Ստեփանյան, Թամարա Հայրապետյան), 2)Բանասիրական ուսումնասիրություններ (նախագահողներ՝ Ալեխտա Դուրխանյան, Վազգեն Համբարձումյան, Վանո Եղիազարյան, Հայկունուշ Մեսրոպյան, Հովիկ Մուսայելյան), 3)Կրթական գործ. սկզբնավորումը, ձեռքբերումները եւ զարգացման արդի հիմնախնդիրները (նախագահողներ՝ Լուրա Ասատրյան, Շողիկ Ոսկանյան), 4)Բնագիտական ուսումնասիրություններ (նախագահողներ՝ Աշոտ Մարտիրոսյան, Լուիզա Վարդանյան):

Երկօրյա աշխատանքից հետո տեղի ունեցավ գիտաժողովի փակմանը նվիրված լիագումար միտ, որտեղ լսվեցին մասնախմբերի նախագահողների հաղորդումները:

Ելույթ ունեցավ նաեւ Սամվել Հարությունյանը, ով իր խոսքն ավարտեց Ալսել Բակունցի «Կյորես» վիպակի վերջնամասի հրաշալի ասումներով:

Գիտաժողովի աշխատանքներն ամփոփեց Գորիսի պետական հա-

մալսարանի նեկտոր Արտուշ Դուկասյանը:

Տեղի ունեցան նաեւ պատմաճանաչողական շրջայցեր Գորիս քաղաքում ու տարածաշրջանում:

Գիտաժողովի աշխատանքները սկսելուց առաջ բացվեց Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին նվիրված ցուցահանդեսը:

Հետագայում հայացք ձգելով գիտաժողովի աշխատանքներին կարելի է փաստել, որ այն իսկապես անմխաղեպ իրադարձություն էր Այոնիքի հոգեւոր-մշակութային եւ կրթական-գիտական կյանքում:

Ընտրվել էր հետաքրքիր, գիտության ամենատարբեր ոլորտներն ընդգրկող թեմատիկա, ընդ որում գրեթե բոլոր թեմաներն առնչվում էին Այոնիքին:

Այդ ամենն ունկնդրելուց հետո մեր առջեւ բացվեց միանգամայն նոր Այոնիք, իսկ ավելի ճիշտ՝ գիտաժողովը բազմապատկեց մեր իմացությունը Այոնիքի մասին:

Նախորդ տարիներին նույնպես

թյամբ, եւ ներկայացվող զեկուցումների խորությամբ ու նորությունների պարունակությամբ, եւ կազմակերպական մակարդակով չէր զիջում նմանատիպ որեւէ միջոցառման:

Անշուշտ, գիտաժողովի նման մակարդակը հնարավոր եղավ ապահովել այդ նպատակով նախապես ստեղծված կազմակերպչական խելամիտ, արդյունավետ եւ նպատակաւաց աշխատանքի շնորհիվ: Սակայն չի կարելի չառանձնացնել համալսարանի նեկտոր Արտուշ Դուկասյանի եւ Գորիսի պետական համալսարանի Հիմնադրար ու հասարակական գիտությունների ֆակուլտետի ղեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թեմուրյան Մարությանի մեծ ջանքը, նվիրումը եւ, իհարկե, պրոֆեսիոնալիզմը:

Ի դեպ, Թեմուրյան Մարությանը հրաշալի կազմակերպիչ, խորիմաց բանասերի եւ ճշմարիտ մտավորականի բացառիկ դերակատարությունը նկատելի է ոչ միայն Գորիսի պետական համալսարանում, այլեւ Գորիսի գիտական ու հատկապես



Ձախից՝ Դավիթ Գասպարյան, Սարգիս Մխիթարյան, Աշոտ Մանուշարյան

Գորիսի պետական համալսարանում կազմակերպվել էին գիտաժողովներ ամենատարբեր թեմաներով, որոնց մասնակցել էր նաեւ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտը, բայց մեծաթիվ գիտնականների միաժամանակյա եւ նման ու ակտիվ մասնակցություն չի եղել երբեք:

Առիթ ենք ունեցել գիտաժողովների մասնակցել նաեւ մայրաքաղաքում: Ձուգահեռներ եւ համեմատություններ անցկացնելով դրանց ու գորիսյան վերջին գիտաժողովի միջեւ, կարելի է ասել, որ մեր գիտաժողովը եւ թեմատիկ բազմազանու-

գրական կյանքում, ինչը վերստին դրսևորվեց գիտաժողովի նախապատրաստման եւ անցկացման ամբողջ ընթացքում:

Մնում է հուսալ, որ Գորիսի պետական համալսարանի մեծահարգ նեկտոր Արտուշ Դուկասյանի ջանքով կամբողջացվեն գիտաժողովի նյութերը եւ առնվազն մեկ գրքով կորվեն ընթերցողի սեղանին:

ՍԱՍՎԵԼ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ

Լուսանկարները՝ Գեորգ Հայրապետյանի

## Հունական մշակույթի հետքերով

Հույները Կապանում հայտնվել են 1850 թվականին՝ շարունակելով ռուս եւ գերմանացի պղինձ արդյունահանողների սկսած գործը: Կավարտի Մարգ կոչվող բարձրունքին հիմնադրեցին իրենց գյուղը՝ Բաշքենդ, բնակավայր հիմնելուց հետո՝ 1865 թվականին, կառուցեցին Սուրբ Կատարինե եկեղեցին: Քիչ ավելի շուտ՝ 1853 թվականին, հույն արդյունաբերող Խարլամպի Կոնդուրովը կառուցեց Կավարտի պղնձաձուլարանը՝ աստիճանաբար մեծացնելով հզորությունը:

Աշխարհի հնագույն մշակույթ ունեցող ազգի ներկայացուցիչները Ձանգեզուրի լեռնաշխարհի ներմուծեցին իրենց կենցաղը, քաղաքակրթությունը, զարգացրին պղնձի արդյունաբերությունը: Հույները կառուցեցին հիդրոկայան, հացի փուռ, բացեցին տնտեսական խանութներ, հիմք դրեցին բարերարությանը (կառուցել են Կավարտի դպրոցը), հիմնեցին այգիներ:

«Հունական մշակույթը Կապանում» խորագիրն էր կրում Կապանի Շմավոն Մովսիսյանի անվան թանգարանում տեղի ունեցած միջոցառումը, որին մասնակցում էին տարբեր տարիքի եւ զբաղմունքի մարդիկ, մտավորականներ, Կապանի եւ Քաջարանի տարածաշրջանների հոգեւոր հովիվները: Պատմական անդրադարձ եղավ Կապան ոտք դրած առաջին հույներից, նրանց ներդրած ավանդին Կապան տանը, նրանց ներմուծած բարքերին, տնտեսական գործունեությանը, մասնավորապես, պղնձի

արդյունահանման ոլորտում: Առանձին խոսվեց Կապանում հունական հուշարձանների վերաբերյալ:

Օրվա բանախոսներն էին Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանը եւ Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարանի մշակութային միջոցառումների կազմակերպիչ Աստղիկ Հակոբյանը: Վերջինս իր զեկուցման մեջ նշեց, որ Բաշքենդի Սուրբ Կատարինե եկեղեցին այժմ խարխուլ վիճակում է, կղմինդրածառն տանիքը խարխուլված է, թափված են կամարների սրբատաշ քարերը: 2007թ. Կապանի լեռնահարստացման կոմբինատը փորձեց իրականացնել եկեղեցու տեղափոխումը: Կապանցի ճարտարապետ Յուրա Գեորգյանը կազմեց տեղափոխման նախագիծը, որովհետեւ տեղափոխվելիք վայրը, բայց այսբանով ավարտվեցին աշխատանքները: Եկեղեցու տեղափոխման հարցերով վերջերս սկսեց զբաղվել Երեւանում գործող

«Պոնտի» հունական հասարակական կազմակերպությունը, բայց այսօրվա դրությամբ գործը տեղից չի շարժվել: Եկեղեցին դիմացել է Ձանգեզուրում տեղի ունեցած երկու երկրաշարժի (1931 եւ 1968 թվականներ), բայց այսօր կանգնել է փլուզման իրական վտանգի առջեւ:

Միջոցառման մասնակիցներին հետաքրքրում էր, թե ինչ բարքեր ներմուծեցին հույները մեր լեռնաշխարհ: Մաքրակենցաղությունն էր նրանց բնորոշ, համարձակությունը, պայքարն իրենց իրավունքների համար, սերտ հարաբերությունները տեղացիների հետ, նաեւ ձուլվեցին հայերի հետ: 20-րդ դարի սկզբին հայ-թուրքական բախումների ժամանակ հույներն անցան հայերի կողմը:

Նրանց սերունդները մինչեւ այժմ բնակվում են Կապանում եւ Մեղրիում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵՆՅԱՆ

# «Ոսկե աշուն-2017»-ը՝ Քաջարանում

(լուսանկարները՝ Համլետ Գեորգյանի)



## Ութ տասնամյակով իմաստավորված կյանք

էջ 1 իսկ ինքը դարձավ նրա առաջին ուսանողն ու շրջանավարտը: Մեր գրույցի ընթացքում իրենքս խոստովանում է, որ ապագա կնոջ հետ ծանոթացել է տեխնիկումի ընդունելության քննությունների ժամանակ, ավելի ստույգ՝ հայոց լեզվի քննության օրը: 1962-ին ավարտեց տեխնիկումը՝ «Օգտակար հանձնների հարստացում» մասնագիտությամբ: Հիշում է, որ դիպլոմային աշխատանքը պաշտպանեց հենց արտադրությունում: Ուսմանը զուգահեռ աշխատել է հարստացուցիչ ֆաբրիկայում՝ խտանյութի ֆիլտրման բաժնի բանվոր: Երկու-երեք տարի աշխատելուց հետո տեղափոխվել է կոմբինատի արտադրատեխնիկական բաժին՝ որպես ավագ ճարտարագետ: Լավագույն լեռնագործների հետ է աշխատել՝ Վիգո Աթոյան, Նապոլեոն Առաքելյան, ուրիշներ, ովքեր նպաստել են իր մասնագիտական աճին:

Յետո եկավ բարձրագույն կրթություն ստանալու ժամանակը: Հանքարդյունաբերությանը բարձրակարգ ճարտարագետներ էին անհրաժեշտ: Առանց արտադրությունից կտրվելու ընդունվեց Մոսկվայի լեռնային ինստիտուտ, որն ավարտեց «Օգտակար հանձնների ծննդավայրերի ստորգետնյա վերանշակման տեխնոլոգիա եւ կոմպլեքսային մեքենայացում» մասնագիտացմամբ՝ ստանալով ստորգետնյա աշխատանքների գծով լեռնային ինժեների որակավորում եւ շարունակեց գործունեությունը՝ որպես ֆաբրիկայի վարիչ:

Օրերից մի օր արտադրական խորհրդակցության ժամանակ կադրերի բաժնի վարիչը ղեկավարությանը տեղեկացրեց, թե ֆաբրիկայում գործերը լավ չեն գնում, քանզի արտադրությունում բարձրագույն կրթությամբ հանքահարստացնող ինժեներների պակաս է զգացվում: Ծարտարագետներից մեկն էր միայն ավարտել Մոսկվայի լեռնային ինստիտուտը՝ հանքահարստացնողի մասնագիտությամբ: «Մտածեցի՝ ինչու չփորձեմ երկրորդ մասնագիտությունը ստանալ, դիմում գրեցի Լենինգրադի Գ.Պլեխանովի անվան լեռնային ինստիտուտ՝ նշելով, որ ավարտել եմ Մոսկվայի լեռնային ինստիտուտը՝

ստորգետնյա աշխատանքների գծով, հիմա ցանկանում եմ հանքահարստացնողի մասնագիտություն ստանալ, ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ: Մինչ մեկ շաբաթը եկավ պատասխանը՝ տեղեկացնելով, թե երրորդ կուրսի ուսանող եմ, իհարկե, նաեւ առարկաների տարբերությունները հանձնեցի»: Երկրորդ բուհում ուսումնառությունը տեւեց չորս տարի՝ 1972-1976 թվականներ, ստացավ լեռնային ինժեներ-հանքահարստացնողի որակավորում, որից հետո լեռնահարստացման կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայի վարիչն էր՝ մինչեւ 1981 թվականը, երբ նշանակվեց ձեռնարկության գլխավոր ինժեներ, իսկ 1985-1991 թվականներին գլխավորել է Կապանի լեռնահարստացման կոմբինատը: Մեր երկրի եւ հենց լեռնահարստացման կոմբինատի համար ծայրաստիճան մի բարդ ժամանակաշրջան էր դա, երբ խզվեցին տնտեսական կապերը հանրապետության սահմաններից դուրս գտնվող գործընկերների հետ, իսկ նորերը չէին ստեղծվել: Առաջիններից մեկն ինքը վերադասի առջեւ հարց բարձրացրեց կոմբինատի արտադրանքը՝ պղնձի խտանյութն արտասահման առաքել, նաեւ արտադրանքի մի մասը փոխանակել ապրանքներով:

Ծանոթանալով նրա կենսագրությանը, վերստին համոզվում ես, որ շարքային լեռնագործից հասել է մինչեւ ձեռնարկության տնօրենի պաշտոնին, անցել հանքագործի մասնագիտության բոլոր աստիճաններով:

1990-ականների առաջին կեսին այլ էր նրա գործունեության ոլորտը, աշխատել է լեռնահետախուզական արշավախմբում, որանից առաջ՝ ՀՀ գիտությունների ակադեմիայի ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի Կապանի փորձնական գործարանում՝ որպես նոր ֆլուտամեքենաների արտադրման ու ներդրման բաժնի վարիչ: 1989-ին նրան շնորհվել է հեղինակային իրավունք՝ «Պնեմատիկ ֆլուտացիոն մեքենա» աշխատանքի համար (համահեղինակությամբ): Ալբերտ Ստեփանյանը ձեռնարկեց նաեւ ֆաբրիկայի թափոններից ներկայնյութ՝ օխրա ստանալու գործը, նմուշներն ուղարկել էր Լենինգրադ, նաեւ պատ-

վիրատուներ էին հայտնվել: Այնտեղից դրական եզրակացություն էր ստացել, բայց գործին աջակցողներ չեղան, եւ մտադրացումն այդպես էլ իրականություն չդարձավ:

Երբ Կապանում Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսումնական ստույգից կեստի հիման վրա բացվեց ինստիտուտի մասնաճյուղը (1996 թվական), Ա.Ստեփանյանը նորաբաց մասնաճյուղում անցավ դասախոսական աշխատանքի՝ նշանակվելով ընդերքաբանության եւ մետալուրգիայի ամբիոնի վարիչ: Ոչ միայն իր տեսական գիտելիքները փոխանցում էր ուսանողին, այլեւ դասագրքաստեղծ գործունեություն էր ծավալել, այն համոզմունքն ուներ, որ դասախոսն ուսանողի մեջ պետք է տեսնի երկրի ապագա տիրոջն ու պաշտպանին: Մասնավորապես, նրա արխիվային փաստաթղթերի մեջ այսօր պահպանվում է այն վկայագիրը, ըստ որի՝ 2003-2004թթ. հրատարակված լավագույն դասագրքի եւ ուսումնական ձեռնարկի մրցույթում նրան երկրորդ մրցանակ է շնորհվել:

Իր փոխանցմամբ՝ տասից ավելի ուսումնական ձեռնարկներ ունի գրած հանքահարստացման վերաբերյալ, որոշները ձեռագիր վիճակում են: Դրանցից պատճենահանելով օգտվում էին նրա ուսանողները: Հավելում է, որ դրանք գրախոսելուց, խմբագրելուց, սրբագրելուց հետո կարելի է տպագրել եւ օգտագործել որպես ուսումնական ձեռնարկ:

Հայաստանի ճարտարագիտական պետական համալսարանում դասավանդել է մինչեւ 2013 թվականը: Քանիցս խրախուսվել է շնորհակալագրերով ու վաստակագրերով, 1981-ին նրան շնորհվել է «Հայկական ԽՍՀՄ կուլտուրայի վաստակավոր աշխատող» պատվավոր կոչումը, իսկ 2013-ին արժանացել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ոսկե հուշամեդալի:

Պատանեկան տարիքում Ստեփանյանը հակում ուներ խաղային մարզաձեւերի հանդեպ (ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ), բայց ավելի շատ տարված էր ֆուտբոլով: Նույնիսկ բանակում ծառայելիս է լրջորեն զբաղվել այդ մարզաձեւով, ընդգրկված էր այն քաղաքի թիմում, որտեղ տեղակայված էր գործասար-

Նույնիսկ ընկերական հանդիպում են անցկացրել Կիեւի «Դինամոյի» հետ: Բանակից զորացրվելուց հետո եւս զբաղվել է ակտիվ ֆուտբոլով: Իսկ ամենալուրջ հաջողությունը եկավ 1963 թվականին, երբ Հայաստանի գավաթի խաղարկության եզրափակչում Ղափանի «Լեռնագործը» հաղթեց Լենինականի «Տեքստիլին» եւ ոչ միայն նվաճեց գավաթը, այլեւ իրավունք ստացավ մասնակցել ֆուտբոլի Խորհրդային Միության առաջնության «Բ» խմբի մրցաշարին: Հանդիպման ելքը վճռած միակ գնդակը հակառակորդի դարպասն անցկացրեց «Լեռնագործի» կենտրոնական հարձակվող Ալբերտ Ստեփանյանը: Ֆուտբոլ խաղացել է մինչեւ 1965-66 թվականը, ծնկի ծանր վնասվածք ստացավ, ինչը սահմանափակեց ակտիվ ֆուտբոլով զբաղվելը: Նաեւ մարզչական աշխատանքով է զբաղվել, թվարկում է իր սաների անունները, ովքեր հայտնի մարդիկ են Կապանում, նաեւ ֆուտբոլային աշխարհում: Առաջացած տարիքում եւս հագել է ֆուտբոլիստի մարզագզեստը եւ խաղացել վետերանների համար նախատեսված հանդիպման ժամանակ:

Այդ ամենից զատ՝ Ալբերտ Ստեփանյանը հետաքրքրական գրուցակից է, գրքասեր մարդ: Ազատ ժամանակը լցնում է ընթերցանությամբ, նաեւ տեխնիկական գրականություն է կարդում, հաճույքով խոսում անցած-գնացածի մասին: Ես էլ պատեհ առիթը բաց չեմ թողնում հարցնելու՝ եթե կյանքը նորից սկսեր, կապրեր նո՞ւյն ձեւով, թե՞... «Կապրեի նույն ձեւով, բայց կանցի որոշ քայլեր, որ ժամանակին չեմ արել...»:

Կարծիք կա, որ մեր բնական պաշարները գիշատչորեն արդյունահանվում են, ընդերքը թալանվում է, համամի՞տ է այդ կարծիքին:

- Դեմ եմ բնական պաշարներն անարդյունավետ օգտագործելուն, ձեռ ասածը նշանակում է ընտրողական արդյունահանում, որ, ըստ ամենայնի, թալան է, դա հանքավայրի մահ է, որ լրիվ հարուստ պարունակություն ունեցող հանքաքարը հանեն, հետո ի՞նչ են անելու: Յուրաքանչյուր տասը տարվա կտրվածքով լեռնահանքային ձեռնարկություն-

ների արտադրողականությունը երկու անգամ պիտի բարձրանա, բա ինչի՞ հաշվին: Պիտի հարուստ երակների հետեւից չընկնեն, ես համախառն արդյունահանման կողմնակից եմ, - պատասխանում է: Մարդկային ամենաբացասական գծերից է համարում անազնվությունը, դավաճանությունը եւ հավելում, որ չարիքի արմատն այս երկուսն են: Կյանքի ամենատխտոր օրն իր համար դատեր մահն էր, ամենաուրախ օրը՝ ավագ թոռան հարսանիքի օրը, արդեն մի ծոռ ունի՝ Նոյ անունով: Հընթացս հետաքրքրվում ենք, թե ովքեր են իր սիրած մանկավարժները:

«Իմ հայոց լեզվի ուսուցիչը՝ Հայկ Խաչատրյանը, ոչ մեկի հետ չեմ փոխի: Մի՞թե այդպիսի մանկավարժ կա աշխարհում: Հայոց լեզվի հարստությունը, լեզվական նրբությունները նրանից եմ սովորել: Լեռնամետալուրգիական տեխնիկումում լավ դասատուներ կային՝ Ղազարյան Բենիկ (մեխանիկա), Գաբրիելյան Հախեն (քիմիա եւ ֆիզիկա), Առուստամյան Կանո (մաթեմատիկա): Արտադրության ոլորտում ինձ համար մեծություն է Ֆրունզե Պետրոսյանը»:

Ընթերցողին տեղեկացնենք, որ Հայկ Խաչատրյանը 1950-ական թվականներին Ղափանի շրջանային ժողկրթաժվարն էր, նաեւ հայոց լեզու եւ գրականություն է դասավանդել Ղափանի N2 միջնակարգ դպրոցում, հետո տեղափոխվել Երեւան: Գրական հանրությանը հայտնի է «Տիգրան Մեծ», «Արտավազ», «Քերթողահայրը» եւ այլ պատմավեպերով, «Հացապատում» եւ ուրիշ գրքերով, եղել է Հայկական խորհրդային հանրագիտարանի պատասխանատու քարտուղարը:

Գուցե իր սիրելի մանկավարժի օրինակն է վարակիչ եղել, որ Ալբերտ Ստեփանյանը մինչեւ հիմա չի կտրվել գիր ու գրականությունից, գրչից, հուշագրությամբ է զբաղվում, թղթին է հանձնում իր տպավորությունները, հիշողությունները «ծնված օրից մինչեւ այսօրվա վիճակը», ինչպես ինքն է ձեւակերպում:

# ԲԼԵՖ ԵՒ ԱՃԱՅԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. Փորձեց լվանալ անմաքուր ձեռքերն ու երեսը, բայց ավելի ցեխոտվեց

Հոկտեմբերի 9-ին, ինչպես սովորել է, մայրաքաղաքային մի շարք հեռուստատեսային ծրագրեր տասը րոպե տեղադրված փառաբանության համոզիչ կազմակերպեցին Սյունիքի մարզպետի պաշտոնավարման տարեկիցի (եւ ոչ տարեդարձի) առիթով:

Հանդեսը կազմակերպվել էին Վահե Հակոբյանի վարձակալությամբ նախօրեին Կապան ժամանած մոտ քսան լրագրող:

Լրագրողների հետ հանդիպելու ու գրուցելը, ինքնըստիմյաց, դրական երեսույթ է, իսկ այս դեպքում ենթադրելի էր, որ նա պետք է գոնե համառոտ տեղեկատվություն տա, թե մարզպետի գործառնությունների սահմաններում ի՞նչ է արել անցած մեկ տարում, ինչպե՞ս են գործերը մարզպետարանի ենթակա կազմակերպություններում, ի՞նչ խնդիրներ ու դժվարություններ կան մարզի համայնքներում եւ ինչպե՞ս է պատկերացնում դրանց հաղթահարումը կամ լուծումը:

Սակայն ասուլիսը, ինչպես հետո պարզվեց, կազմակերպվել էր բոլորովին այլ նպատակով:

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ եւ իր սպասավորների մասնակցությամբ պատրաստված տեսանյութում հնչեցին նոր խոստումներ ու ծրագրեր, որոնք, չնայած որ եւ արդեն չունեն մարզպետի պաշտոնական պարտականությունների հետ, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում եւ վերստին պարզորոշ դարձնում, թե ով է Հայաստանի ամենաազնվարակալ երկրամասի Սյունիքի մարզպետի աթոռը զբաղեցնող անձնավորությունը, ինչ գիտելիքների ու աշխարհայեցողության կրող է եւ ինչով է զբաղված իրականում:

Ի՞նչ ասաց մարզպետը լրագրողներին. սավառի արձանագրումը շատ կարեւոր է նաեւ հանրային վերահսկողության ապահովման առումով, որովհետեւ, ինչպես ցույց է տալիս անցած մեկ տարին, այդ մարդու խոսքի եւ գործի միջեւ որեւէ կապ չկա:

Եվ ահա, թե ինչ ասաց: - Սյունիքի մարզը ՀՀ կառավարություն է ներկայացրել 12.2 մլրդ դրամի ութ ներդրումային ծրագիր, որից երկուսը՝ գյուղընթաց վերաբերող, արժանացել է հավանության (մեկը վերաբերում է սառնարանային տնտեսությանը, մյուսը՝ մեքենատրակտորային կենտրոն ստեղծելուն):

- Կապանում պիցցայի գործարան է հիմնվելու իտալացի Նիկոլա Դի Մաուրոյի կողմից, ով երեւանում է նախապես ցանկացել հիմնել այն, սակայն մտքափոխվել եւ կառուցում է այստեղ:

Սառեցված կիսաֆաբրիկատ պիցցան հիմնականում կարտահանվի Ռուսաստան եւ Իրան: Գործարանում կաշխատի 30-ից 100 մարդ, իսկ ներդրումների ծավալը 300 հազար դոլար է:

- «Կապան մոլ» առևտրի կենտրոնում գործելու է խանութ, ուր ներկայացված է լինելու «Zara», «Bershka», «Stradivarius», «Pull and Bear», «Oysho», «Topshop», «New look» եւ այլ հանրահայտ բրենդների արտադրանքը (խանութի բացումը՝ հոկտեմբերի երկրորդ կեսին):

- Կյանքի է կոչվելու «Ձանգի» կրթական նախագիծը, որի հիմնական նպատակն է նպաստել մարզի բնակիչների եւ հատկապես երեխա-

ների ու երիտասարդների բնապահպանական, գյուղատնտեսական եւ տուրիստական ոլորտներում գիտելիքների զարգացմանը:

Սիսիան, Գորիս, Կապան եւ Մեղրի քաղաքներում (դպրոցների բազայի վրա) հիմնվելու է մեկական դասարան, որոնց կից կառուցվելու են ակվապոնիկայի սկզբունքով գործող ջերմոցներ:



- Կապանում գործելու է կինոթատրոն. տեղակայված է լինելու «Կապան մոլ» առևտրի կենտրոնում (կգործարկվի մինչեւ Ամանոր):

- Մեղրիում խաղատուն (կազինո) է կառուցվելու:

Դրսի ներդրողներին առաջարկվելու է 22 հարկանի շինություն, որը կլինի Մեղրիից դուրս՝ 102 սենյակով եւ ռեստորանով:

- Կապանի օդակայանի վերանորոգման արժեքը 2 մլրդ դոլար է:

Զեխական ավիաընկերությունից կգնվի L-410 մակնիշի ինքնաթիռ:

5.5 մլրդ եվրո արժողությամբ 19 տեղանոց ինքնաթիռը թռիչքներ է կատարելու Կապանից-Երեւան եւ հակառակ ուղղությամբ (տոմսի նախնական արժեքը՝ 30-40 հազար դրամ):

\*\*\*

Մարզպետ Վահեի նոր խոստումների էությունն ու կատարմանը ժամանակի ընթացքում անպայման կանդիդատներն են, իսկ հիմա մի քանի դիտարկում եւ խոստումների, եւ հեռուստաշոունի վերաբերյալ:

Նախ մեզ չզարմացրեց մայրաքաղաքից ժամանած լրագրողների անզուսպ հաճկատարությունը:

Սյունիքի հետ որեւէ կապ չունեցող, մարզի մասին նվազագույն պատկերացում չունեցող լրագրողները չէին էլ կարող մեր երկրամասի բնակչությանը մտահոգող գոնե մեկ հարց արժարժել: Դա նույնիսկ անհետաքրքիր էր նրանց, ինչի համար էլ ասելիքը մատուցելիս ընտրվել էր շուտ ասվածը եւ վարձակալին ամեն գնով հաճոյանալու, հանրությանը մոլորության մեջ զգելու մոլուցքը:

Բայց եւ փա՛ռք Աստծո, որ Սյունիքում մայրաքաղաքային լրատվամիջոցների նման շուռներին

քննադատող են վերաբերվում: Եվ նման շուռները շատ վաղուց անջան անդրադարձ անգամ չեն ունենում հանրային տրամադրությունների վրա, մանավանդ որ շուրի «հերոսին» քիչումիչ արդեն ճանաչում են մարզում: Այնպես որ՝ մարզպետը փորձեց լվանալ անմաքուր ձեռքերն ու երեսը, բայց ավելի ցեխոտվեց. բլեֆն ու աճայարարությունը չէին էլ

մեռել, որ նրա հուղարկավորության մասին խոսակցությունները չափազանցված են:

Հեռուստաշոուն վերստին հավաստեց, որ ի դեմս մարզպետ Վահե մարզպետի, գործ ունենք մեծագույն աճայարարի հետ, ով մեկ տարվա ընթացքում այդպես էլ չի հասկացել, թե որ մարզի ղեկավարն է, թե ինչ ասել է Սյունիք:

կարող փրկել նրա վարկաբեկված եւ ծանծաղ էությունը:

Մեզ չզարմացրեց մարզպետի ցոփակեցության հերթական հրավառությունը՝ պաշտոնավարման տարին նշանավորելու համար այդքան մարդ մայրաքաղաքից հրավիրելով, երեւանյան մի քանի հեռուստալրատվամիջոցով տեսանյութ (վճարովի) սփռելով:

Նման իրավիճակների համար է ասված՝ խրախմանք ժամտախտի ժամանակ:

Սյունիքի ունեցվածքով շվայտությանն անձնատուր եղած մարզպետը չէր կարող խնայել միջոցներ՝ իր նվաստությունը թաքցնելու, չէր դատ գոյությունը հիշեցնելու, մերժված սֆաթն ի ցույց դնելու համար:

Հեռուստաշոունի համար ներդրված գումարով հնարավոր կլիներ (մասնագետներն են հուշում) հոգեվարքից դուրս բերել առնվազն մեկ լեռնային գյուղ, ինչպես որ հնարավոր կլիներ ուղղաթիռային ամեն մի թռիչքի համար ծախսվող գումարով լեռնային որեւէ գյուղում առաջնահերթ մի քանի խնդիր լուծել:

Որքանով հասկացանք, հեռուստաշոուն հիստերիայի մեջ հայտնված եւ հանրային մերժումի արժանացած տղայի ճիշն էր՝ ի պատասխան երեք տասնյակի հասնող քննադատական հոդվածների, որ վերջին երեք-չորս ամսում դրվել են ընթերցողի սեղանին, որոնց օգնությամբ դիմակազերծ է արվել ինքը, որոնց մեջ տեղ գտած փաստերի ուժով եւ Հայաստանի Հանրապետության օրենքների զորությամբ ինքը պատասխանատվության առաջ է կանգնելու երբեւէ:

Հեռուստաշոուն մի քանի տասնյակ մարդու՝ մոտ տասը մլրդ դրամ արժեքով ճիզն էր՝ ցույց տալու, որ Վահե Հակոբյան չինովնիկը դեռ չի

Հեռուստաշոուն նորից հավաստեց, որ Սյունիքի եւ սյունեցու ճանապարհը ոչ մի դեպքում չի կարող մեկտեղվել այդ տղայի ու նրա հովանավորների բռնած հակասյունիքյան եւ հակաազգային ճանապարհի հետ:

Հեռուստաշոուն երիցս հավաստեց, որ իրականում գործ ունենք Սյունիքի հանդեպ ատելությանը լցված մի անցավորի, մի ասպատակի հետ:

Մեզ ապշեցրեց նրա ցինիզմը, թե ինչպես է փորձում իր անձնական կամ իր տանիքներից մեկի անձնական բիզնեսը (Սյունիքում կազմակերպվող) ներկայացնել իբրեւ պետական գործ, սյունիքանպաստ գործ, իբրեւ մեծահոգության, բարեհոգության եւ կամեցողության դրսեւորում:

Մեզ ապշեցրեց նրա փխմախության աստիճանը. մեռնող գյուղերով եւ մեռնող դպրոցներով Հայաստանում առաջին տեղը զբաղեցնող Սյունիքի մարզը, գործազրկության եւ աղքատության, ինչպես եւ չմշակվող հողերի ծավալով, ամեն օր փակվող դռներով ամենաբարձր միջ ունեցող երկրամասն ուզում է «փրկել» Մեղրիում կազինո կառուցելով, Կապանում պիցցայի արտադրություն դնելով, մարզկենտրոնում բրենդային ապրանքներ վաճառելով, ուղղաթիռային թռիչքներով, թանկարժեք մեքենաներով, աշխատանքից ամեն շաբաթ փախչելով...

Իսկ անկեղծության լիակատար բացակայությունը հեռուստաշոուն ամբողջ ընթացքում ուղղակի պսպղում էր:

Խոսում է կազինոյի, պիցցայի գործարանի, բրենդային ապրանքների խանութի, կինոթատրոնի մասին, բայց վախենում է ասել, թե կոնկրետ ում բիզնեսն են դրանք:

Կուրծք է ծեծում, թե այսքան-այսքան աշխատատեղ ենք բացելու, բայց չի ասում, որ իր եւ հնամաշ բուտաֆոր Սիերի ջանքերով վերջին երեք տարում մոտ հազար աշխատատեղ է փակվել Սյունիքում:

Ասում է՝ սիրում եմ Սյունիքը, բայց վախենում է բարձրաձայնել, որ իր նոր խոստումներից ու ծրագրերից, կազմակերպվող բիզնեսներից որեւէ մեկի հետ որեւէ սյունեցի կապ չունի (չհաշված էժան աշխատուժը):

Այնքան է կտրված իրականությունից, այնքան է օտարված Սյունիքից, որ մարզի հիմնախնդիրների մասին խոսելիս կարելու է երկու «խնդիր» (եթե, իհարկե, դրանք խնդիր կարելի է համարել). 1)մարզում մասնագետ կադրերի սով է, 2) կրթության ոլորտում «մայր-աղջիկ-տղա-բարեկամ-խնամի-քավոր-սահիկ կապն է», որ արմատախիլ պիտի արվի:

Ուրիշ խնդիր, ուրիշ մտահոգություն Սյունիքում, ըստ մարզպետի, չկա:

Այնքան է տրվել ստին, որ մեր երկրամասում կատարված եւ կատարվող ամեն դրականը (նաեւ նախկինում կատարվածը) փորձում է վերագրել իրեն: Անգամ Կապանի ակնաբուժական կենտրոնի հիմնումն է կապում իր հետ:

Խոսակցության առանձին նյութ է Կապանի օդակայանի ողիսակալը:

Կերպարի ողորմելիությունն ու նեղմտությունն ամբողջանում են, երբ իմանում ենք, թե որոնք են, ըստ մարզպետի, անցած մեկ տարվա առավել ուշագրավ նվաճումները Սյունիքում՝ 1)մարզի դպրոցներին տրամադրվել է օդանդիչ զենք, 2) մարզի դպրոցները վերազինվել են համակարգիչներով, 3)բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների համար սահմանվել է կրթաթոշակ:

Մի դիտարկում էլ բժիշկ-հոգեբաններն են անում՝ ինչու է մարզպետը մարդկանց հետ, անգամ լրագրողների հետ՝ ասուլիսի ժամանակ, շփվում արեւային ակնոցներով: Ըստ մասնագետների՝ ակնոցներն այս դեպքում իր աչքերն ու հայացքը, կեղծավոր ու վախվորիկ էությունը գրուցակիցներից թաքցնելու ընդունակ ձեւ է, քանի որ աչքերը մարդու ներաշխարհի, մարդու անկեղծության, ազնվության ճշգրիտ արտահայտիչն են ու հայելին:

Իսկ գուցե նրան հավատացրել է, որ հույժ կարճահասակության պարագայում ակնոցները լրջություն եւ խորհրդավորություն կարող են հաղորդել իր կերպարին:

Շատ հետաքրքիր էր մարզպետի միջոցներով մի քանի ժամով Կապան այցելած եւ մարզպետի նոր խոստումներին ու ծրագրերին ունկնդիր եղած երեւանցի լրագրող կոչվածի եզրակացությունը՝ «Այդ ամենից հետո Սյունիքում ապրելն ավելի գրավիչ ու դյուրին կլինի, կյանքն ավելի հետաքրքիր կդառնա»:

Եվ, այդ բոլորով հանդերձ, ցանկանում ենք, որ մարզպետի հերթական խոստումներն ու ծրագրերը գոնե այս անգամ ի կատար ածվեն, այլապես անհնար կլինի նրանից հեռացնել սուտիկ մարզպետ հորջորջում-պատվանունը՝ մեկ տարվա «քրտնաջան գործունեությամբ» վաստակած:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# Արգինե Սահակյան. «Համահայկական համաժողովները շատ լավ հնարավորություն են ընձեռում Հայաստան-Սփյուռք համագործակցության, սփյուռքահայ մեր ազգակիցների հետ շփման համար»

էջ 4 Այդ ընթացքում հասցրել ենք տարբեր ծանոթություններ հաստատել, մնում է յուրաքանչյուրս մեզ վրա աշխատելով կառուցենք մեծ կամուրջ Սփյուռքի հետ տարբեր բնագավառներում: Կոնկրետ ինձ հետաքրքրող մշակութային ոլորտում կուզենայի բոլոր ստեղծագործողների ներկայանալու համար ընդհանուր հարթակ ստեղծվեր:

- **Համաժողովն ընթացել է չորս քեմատիկ ուղղությամբ՝ Հայաստանի զարգացման հիմնախնդիրները, ՀՀ պաշտպանական քաղաքականության առանձնահատկությունները ժամանակակից մարտահրավերների պայմաններում, արտաքին քաղաքականության օրակարգը, հայապահպանության հիմնախնդիրները: Դուք ո՞ր ուղղությամբ կազմակերպված նիստերին եք մասնակցել:**

- Առաջարկված քեմատիկից, հաշվի առնելով մասնագիտությունս ու նախասիրությունս, ընտրեցի հայապահպանության հիմնախնդիրները: Այդ ուղղությամբ ընթացող նիստերը նվիրվեցին հայեցի դաստիարակության, հայկական դիմագծի պահպանման, լեզվի պահպանության եւ մի շարք այլ հիմնախնդիրներին: Տպավորիչ էր Մխիթարյան միաբան հոգեշնորհի տեր Վահան ծայրագույն վարդապետ Օհանյանի «Մխիթարյան միաբանության մշակութային ժառանգության պահպանության հիմնահարցեր» քեմայով ելույթը (Իտալիա), որի ընթացքում ֆիլմի միջոցով ցուցադրվեց Մխիթարյան միաբանության ժառանգությունը, ինչպես նաև առաջարկ հնչեց այդ հարուստ ցուցադրությունը ներկայացնել նաև Հայաստանում: Հետաքրքիր էին նաև «Թոմի» հարսանեկան գյուղ նախագծի համահիմնադիր Հայկ Երանոսյանի ելույթը՝ «Հայկական ավանդական հարսանիքի տոնածիսական համալիրը՝ ազգապահպան կարևոր գործոն» քեմայով, ՀԲԸՄ Եվրոպայի մասնաճյուղի տնօրեն, «Կորիզ» երիտասարդական ծրագրի համակարգող (Բելգիա) Նիկոլա Տավիտյանի ելույթը՝ «Գերազանցություն առաջնորդության մեջ՝ Սփյուռքի համար հավելյալ արժեք: «Կորիզ» ծրագրի ներկայացում» քեմայով: Ի դեպ, «Կորիզ»-ը ՀԲԸՄ Եվրոպա-



Արգինե Սահակյանը Սոցիալական աշխատակիցների միջազգային միության աշխատակազմի անդամ (ԱՄՆ) Ստեփան Հովակիմյանի հետ

յի նախածեռնությունն է, որի նպատակն է միավորել տարբեր երկրներում ապրող հայ երիտասարդներին, ստեղծել ապագա հայ առաջնորդների համաշխարհային ամուր ցանց, կրթել ու խորհուրդներով աջակցել նրանց եւ օգնել ներգրավվել Հայաստանում ու Եվրոպայում իրականացվող տարբեր ծրագրերում: Ինչպես արդեն նշեցի, համաժողովի կարևորագույն կետերից մեկը տարբեր ծանոթություններ հաստատելն է, ինչի հնարավորությունը մեզ տրված էր, մնում է հետագա ընթացք տալ այդ համագործակցությանը:

- **Արդեն խոսեցիք Ձեր նախընտրած ուղղվածության շրջանակներում առավել տպավորիչ ելույթներից, կուզենայինք, որ առանձնացնեիք հնչած կարևոր ելույթները, հետաքրքիր մարդկանց ներկայությունը եւ այլն:**

- Առհասարակ առօրյա մեր կյանքում հաճախ ենք լսում մեր երկրի բարձրաստիճան գործիչների ելույթները, բայց ինձ համար այդ օրերին

առավել կարևոր ու հետաքրքիր էին Սփյուռքից հրավիրվածների ելույթները: Հատկապես առանձնահատուկ էր Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսի օրհնության խոսքը, որտեղից կուզենայի շեշտել հատկապես այս հատվածը. «Սփյուռքը անբաժան ու անբաժանելի մասն է հայրենիքի: Հետևաբար, տնտեսական, մշակութային, կրթական եւ այլ մարզերին ներս ծրագրուած գործակալություն կողքին, անհրաժեշտ է նաև լրջօրէն մտածել Սփյուռքի փորձագետները ու մասնագետները Հայաստանի կառավարման կառուցման գործնապես մասնակից դարձնելու միջոցներում մասին: Այս մտեցումով միայն Հայաստան-Սփյուռք գործակալությունը իր լիարժեք իմաստը կը ստանայ»:

Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր Կարո Փայլանի մուտքը դահլիճ մեծ ոգեւորություն առաջացրեց ներկաների շրջանում, ովքեր, մեկ մարդու պես ոտքի կանգնելով, դիմավորեցին նրան. սա իսկա-

պես գոնե ինձ համար պատմական պահ էր, որովհետեւ ականատես եղա իսկական հայի կերպարին, ում հետ շփվելը, հայկական շուրջպարը բռնելն իմ կյանքի կարևորագույն ու անմոռանալի պահերից կարող եմ համարել:

Սի նկատառում եւս կուզենայի անել. համաժողովին մասնակից երիտասարդների թիվը պակաս էր, բայց, իմ կարծիքով, այստեղ ներկա էր իսկական հայի կորիզը, որ իսկապես մտածում է հայավարի, ունի հարուստ փորձ եւ ներկայացրեց դիտարկումներ, որոնք անհրաժեշտ են մեր երկրի զարգացման համար:

Ինձ համար կարևոր էր նաև սփրահայ Անդրանիկ Պողոսյանի հետ ծանոթությունս, ով Հալեպում հայկական վարժարանի հիմնադիր է: Նա խոստացավ աջակցել իմ աշխատանքների ցուցադրությանը Լիբանանում: Երբ սփյուռքահայ ծանոթներս տեղեկացան, որ, երիտասարդ տաղանդավոր ստեղծագործող լինելով, տարբեր նախածեռնություններով հանդես գալով, աշխատանք չունեն, մտահոգվեցին՝ Հայաստանի խնդիրներից մեկը համարելով այն, որ հայը սեփական երկրում իր արժանի տեղը չի կարողանում գտնել:

- **Ձեր կարծիքով՝ համաժողովը ծանայե՞ց իր նպատակին:**

- Նախ նշեմ, որ համաժողովն ընթացավ շատ հետաքրքիր, կազմակերպված, համեմված տարաբնույթ ելույթներով ու միջոցառումներով: Համաժողովի մասնակիցները բավականին ակտիվ մասնակցում էին քննարկումներին, յուրաքանչյուրը ձգտում էր ներկայացնել իր առաջարկությունները, դիտողությունները քննարկվող նյութի վերաբերյալ: Երբեմն նույնիսկ ժամանակը չէր բավարարում բոլորի կարծիքները լսելու համար, եւ ավելի ակտիվ քննարկում էր ծավալվում միջանցքներում ընդմիջումների ժամանակ: Ինչպես արդեն նշեցի, կցանկանայի, որ նման համաժողովներն ավելի ընդլայնված լինեին եւ այստեղ իրենց մասնակցությունն ունենային հողագործը, բանվորը, արհեստավորը եւ տարբեր այլ բնագավառի ներկայացուցիչներ:

Հանելի ակնբարձր պարգևեցին մշակութային միջոցառումները Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի

եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում Արաքս Մանսուրյանի ստեղծագործական գործունեության 50-ամյակին նվիրված համերգը, «Նաիրի» համահայկական երաժշտական փառատոնի գալա համերգը Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, «Ծագումով հայեր» հաղորդաշարի 10-ամյակի նշումը եւ այլն:

- **Համաժողովի անցկացման հետ կապված բացթողումներ, թերություններ արձանագրե՞լ եք:**

- Իմ կարծիքով՝ երբեք ոչ մի միջոցառում կատարյալ չի լինում: Հեշտ չէ կազմակերպել մնամ մեծ միջոցառում եւ բնավ իմ իրավասության մեջ չի մտնում խոսել դրա թերություններից կամ բացթողումներից, մասնավանդ երբ գիտակցում եմ դրա կազմակերպման ողջ դժվարությունը: Կասեմ միայն մի բան. սա շատ լավ հնարավորություն է Հայաստան-Սփյուռք համագործակցության, սփյուռքահայ մեր ազգակիցների հետ շփման համար: Սփյուռքահայ մեջ տեսա իսկական հայի կերպար, ով մտածում է հային վայել, իսկ Հայաստանում ապրող հայերս, երեւի թե սոցիալական պայմաններից ելնելով, շատ ազգային արժեքներ են կորցնում, ինչի արդյունքում սփյուռքահայը մեզ չի վստահում:

- **Որպես ամփոփում ի՞նչ կասեք, պատրաստվո՞ւմ եք ընդլայնել Ձեր համագործակցությունը ձեռք բերված ծանոթությունների շնորհիվ:**

- Կուզեմ, որ այս մակարդակով քննարկումները հաճախակի լինեն, Հայաստան այցելած մասնակիցները չհիասթափվեն եւ հեռանան թղթին գրված թողնելով իրենց առաջարկությունները, այլ խոսքը գործ դառնա:

Ինչ վերաբերում է հետագա համագործակցությանս, ես այն մարդկանցից չեմ, ով պարզապես դիտում է, այլ սիրում եմ կոնկրետ քայլեր ձեռնարկել: Այդ առումով արդեն իսկ պատրաստում եմ հայապահպանության ուղղությամբ ծրագիր, որ կներկայացնեմ համապատասխան կառույցներին՝ դրանով իսկ փորձելով իմ փոքրիկ ներդրումն ունենալ այդ անչափ կարևոր գործում:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Հանդիպում ընթերցողների հետ

Սյունիքի մարզային գրադարանի սպասարկման բաժնում տեղի ունեցավ հանդիպում արձակագիր, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, լեզվաբանության պրոֆեսոր Դիանա Համբարձումյանի հետ, որին մասնակցում էին մարզային գրադարանի աշխատակիցներ, ընթերցողներ, «Հայաստանում եվրոպական քուլտուր» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի սովորողներ: Նրա անցած ուղին, գրական-ստեղծագործական առնչությունները եւ թարգմանական աշխատանքները ներկայացրեց Սյունիքի մարզային գրադարանի գրադարանային հավաքածուի կազմակերպման, օգտագործման եւ պահպանման բաժնի վարիչ Սիլվա Սարգսյանը:

Դիանա Համբարձումյանը ծնվել է Թբիլիսիում, մանկությունն ու պատանեկությունն անցել են Քաջարում: 1978 թվականին ընտանիքով տեղափոխվել է Երեւան: Գերազանցությամբ ավարտել է Վ.Բրյուսովի

անվան օտար լեզուների պետական ինստիտուտի անգլերենի ֆակուլտետը: 1984-ից մինչեւ այժմ անգլերեն եւ թարգմանության տեսությունն է դասավանդում Վ.Բրյուսովի անվան պետական լեզվախառնակական համալսարանում:

Թեեւ ուշ է ոտք դրել գրական աշխարհ, բայց այժմ 20 գրքի հեղինակ է: Նրա գրած հոդվածները որպես զեկուցում հնչել են միջազգային եւ հանրապետական գիտաժողովներում, փառատոներում: «Աստծո բնակեցրած երկրում» վեպը 2009-ին արժանացել է «Հայր 21-րդ դարակազմի» գրական մրցանակին: Թարգմանել է ամերիկյան գրականության դասակարգման Կուրտ Վոնեգուտի «Կապտանուրուս» եւ Ուիլյամ Ֆոլքների «Սարթորիս» վեպերը: «Տասը լավագույն պատմվածք»՝ հայերեն-անգլերեն ժողովածուն թարգմանվել է գերմաներեն: Նրա պատմվածքները «Հեռագիր Ֆաթիմային» խորագրով լույս են տեսել ռուսերեն եւ իրատա-

րակվել Ռուսաստանում:

Հանդիպման ընթացքում արձակագիր-թարգմանիչը հետաքրքրական դրվագներ ներկայացրեց հայ գրողների հետ ստեղծագործական հանդիպումների մասին, նաև արտասահմանյան ուղեւորությունների, որոնք գրական ներշնչանքի աղբյուր են եղել, մի հատված ընթերցեց իր նոր վեպից: Բանախոսի ելույթում անդրադարձ եղավ նաև գրական թարգմանությունների նրբություններին, այն դժվարություններին, որ հաղթահարել է Ֆոլքների թարգմանելիս: Ցերեկույթի ընթացքում Դիանա Համբարձումյանը մեկ առ մեկ անդրադարձավ իր ստեղծագործություններին, ուշագրավ մանրամասներ ներկայացրեց դրանց ստեղծման պատմությունից: Հանդիպման ավարտին նա ընծայագրերով իր գրքերից բաժին հանեց միջոցառման մասնակիցներին:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

**Կորել Է Դավիթ Կամոյի Հայրապետյանի Ա-000966 համարի տրակտորիստ-մեքենավարի 3-րդ կարգի վկայականը՝ տրված 07.08.2008թ.:** Համարել անվավեր:

### Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ  
**«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՆԵՍԱՐ»**  
ՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ՊՐԵՍԻՆԿՆԵՐԻ ԵՎ ԳԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝  
**ՍՍՍՎԵԼ ԱՆԵՍՅԱՆՅԱՆ**

Հասցե	Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.	(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
Էլ. փոստ	syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք	www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Շնորհակալությունները ընդունվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայական՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1530, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 27.10.2017թ.: